`

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Վիննետ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանց

1. ՑԱՆՑ-ի նպատակն է.

Աջակցել տնտեսական, քաղաքական, սոցիալական ոլորտներում կանանց դերի և մրցունակության բարձրացմանը ազգային, մարզային և համայնքային մակարդակներում:

2. ՑԱՆՑ-ի խնդիրներ.

1. Իրականացնել կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ մոնիտորինգներ, հարցումներ, ուսումնասիրություններ և վերլուծություններ:
2. Նպաստել համայնքային, մարզային և հանրապետական մակարդակներում կանանց հիմնախնդիրների ներկայացման և լուծման գործընթացներին
3. Նպաստել կանանց դերի և մրցունակության բարձրացմանը ազգային, տեղական և միջազգային մակարդակներում՝ համագործակցության և քաղաքացիական ներգրավվածության միջոցով
4. Աջակցել կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների զարգացմանը
5. Նպաստել հավասար հնարավորությունների ու պայմանների ստեղծմանը
6. Նպաստել կանանց իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը
7. Զարգացնել և խթանել կանանց ունակություններն ու հմտությունները
8. Աջակցել կանանց ՌԿ-ներին՝ համագործակցության միջոցով
9. Նպաստել ցանցի անդամների կարողությունների զարգացմանը
10. Նպաստել ՏԻՄ-երի կողմից կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ պլանների մշակման և դրանց իրականացման գործընթացներին
11. Ապահովել ցանցի գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն

3. ՀՁԱՑ-ին անդամակցությունը և անդամակցության դադարեցումը

1. Ցանցի անդամ կարող է դառնալ ցանկացած ՔՀԿ (քաղաքացիական հասարակության կազմակերպություն), որը հետաքրքրված է ցանցի նպատակով և խնդիրներով, ընդունում է ցանցի կառավարման և գործունեության սկզբունքները և համապատասխանում է ներքոնշյալ չափանիշներին.

- Համագործակցություն
- Նվիրվածություն
- Թափանցիկություն
- Հաշվետվողականություն
- Զարգացում
- Իրավունքների հավասարություն
- Հանդուրժողականություն

- Նորարարություն
- Ներգրավվածություն
- Թիմային աշխատանքի կարողություն
- Համախմբվածություն
- Պատրաստակամություն
- Վստահություն
- Պատասխանատվություն
- Լավատեսություն
- Նպատակասլացություն
- Արհեստավարժություն
- Հումորի զգացում
- Համբերատարություն

2. Ցանցի անդամակցելու համար անհրաժեշտ է անդամակցելու դիմում ներկայացնել ցանցի համակարգողին
3. Ցանցի ընդհանուր ժողովը քննարկում է ցանցի անդամության դիմումները և որոշում է կայացնում անդամակցության վերաբերյալ
4. ՑԱՆՑ-ին անդամակցությունը դադարեցվում է՝
   ա/ ցանցի ընդհանուր ժողովի որոշմամբ,
   բ/ անդամ կազմակերպության դիմումի համաձայն:

4. ՑԱՆՑ-ին անդամակցած Կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները.

Իրավունքները.

- Ներգրավվել գործունեության մեջ
- Ընտրել և ընտրվել ցանցի հանձնախմբերում ՀԽ անդամ, ՀԽ համակարգող
- Ներգրավվել հանձնախմբերի աշխատանքներում
- Ստանալ տեղեկատվություն ցանցի գործունեության մասին
- Ներկայացնել առաջարկություններ քննարկվող հարցերի վերաբերյալ

Պարտականությունները.

1. Պահպանել սույն կանոնակարգի դրույթները
2. Կամավոր և ակտիվ մասնակցել ցանցի գործունեությանը, ներկայացնել համապատասխան առաջարկություններ ՀԽ-ին և հանձնախմբերին

3. Նախատեսված լիազորությունների շրջանակներում աջակցել անդամ կազմակերպությունների գործունեությանը
4. Բարեխղճորեն և ժամանակին կատարել ՀԽ-ի և հանձնախմբերի կողմից իր վրա դրված առաջադրանքները
5. Մասնակցել ցանցի Ընդհանուր ժողովի աշխատանքներին՝ ապահովելով կազմակերպության անդամների մասնակցությունը
6. Մասնակցել այն քննարկումներին և հանդիպումներին, որոնք կկազմակերպեն ՀԽ-ն և հանձնախմբերը:

5. Ցանցի կառուցվածքը և կառավարումը.

5.1.1 ցանցի կառավարումը իրականացնում է կենտրոնացված՝ համակարգող խորհրդի /ՀԽ/, կողմից
5.1.2. Համակարգող խորհրդին կից կից գործում է խորհրդատվական խորհուրդը
5.1.3 Ցանցի անդամ կազմակերպությունների միջև առկա է ուժեղ համագործակցային կապ



5.2. ՑԱՆՑ-ի բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է /ԸԺ/, որը գումարվում է տարեկան մեկ անգամ:

Ընդհանուր ժողովը.

- Կազմավորվում է անդամ կազմակերպությունների խորհրդի անդամներից՝ յուրաքանչյուրից 7 հոգի համամասնությամբ և այդ թիվը կարող է փոփոխվել ԸԺ-ի որոշմամբ
- Ընդունում է Ցանցի գործունեության համաձայնագիրը, ռազմավարությունը, կատարում է լրացումներ և փոփոխություններ
- Վերակազմակերպում կամ լուծարում է Ցանցը
- Ձևավորում է մշտական հանձնախմբեր

- Վերահսկում է Համակարգող խորհրդի (ՀԽ) գործունեությունը
- Լսում և հաստատում է ՀԽ հաշվետվությունը (քվեարկությանը մասնակցում են յուրաքանչյուր կազմակերպությունից 4-ական ներկայացուցիչ)
- Կարգավորում է Ցանցի նոր անդամների ընդունման/ հեռացման գործընթացը
- Քննարկում և հաստատում է ՀԽ-ի կողմից ներկայացված տարեկան գործողությունների պլանը
- Իրավասու է Ցանցի անդամ կազմակերպությունների պարզ մեծամասնության մասնակցության դեպում
- Ցանցի յուրաքանչյուր անդամ կազմակերպություն ունի մեկ ձայնի իրավունք
- Քննարկվող հարցերին վերաբերվող որոշումները ընդունվում են ԸԺ-ի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ
- Արտահերթ ժողով կարող է հրավիրվել ՀԽ-ի որոշմամբ, կամ ցանցի անդամ Կազմակերպությունների ընդհանուր թվի 1/3-ի նախաձեռնությամբ

5.3 Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում աշխատանքները վարում է Համակարգող խորհուրդը (ՀԽ)

- ՀԽ-ն կազմավորվում է ցանցի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներից. ընդ որում՝ հիմնադիր կազմակերպություններից՝ 3-ական ներկայացուցիչ, անդամակցող կազմակերպություններից՝ 1-ական ներկայացուցիչ
- ՀԽ անդամները աշխատանքների մասին հաշվետվություն են ներկայացնում իրենց կազմակերպությունների խորհուրդներին
- ՀԽ անդամների ընտրությունը կատարվում է ընդհանուր չափանիշների հիման վրա մշակված ընթացակարգով տարեկան 1 անգամ ռոտացիոն կարգով
- Ցանցի հիմնադիր կազմակերպություններից ռոտացիոն սկզբունքով փոխվում է անդամների 1/3-ը
- Համակարգող խորհուրդը գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով ամսական առնվազն մեկ անգամ
- Մշակում և ընդհանուր ժողովին է ներկայացնում գործողությունների տարեկան պլանը՝ ելնելով հանձնախմբերի աշխատանքային պլաններից
- Հետևում է տարեկան գործողությունների պլանի ընթացքին
- Որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում համակարգողի ձայնը որոշիչ է,
- Լիազորում է ցանցի անդամներից մեկին **ցանցի** անունից հանդես գալը:

5.3.1 ՀԽ անդամի ընտրության մեխանիզմ

- Հայտարարության տարածում կազմակերպությունների ներսում
- Թեկնածուների առաջադրում խորհրդի կողմից կամ ինքնաառաջադրում
- Անդամների ընտրություն տարեկան 1 անգամ առնվազն 1/3 սկզբունքով
- Աշխատանքի կատարողականի գնահատում / հաշվետվություն, կատարողականի գնահատում արտաքին / կազմ. խորհրդի կողմից/ և ներքին / ՀԽ կողմից/ 6 ամիսը մեկ:
- Անդամի փոփոխության վերջնական որոշումը կայացնում է կազմակերպության խորհուրդը:

5.3.2 ՀԽ անդամի ընտրության ընդհանուր չափանիշներն են

- Տվյալ կազմակերպությունում, խորհրդում աշխատանքային փորձ
- Հարգանք վայելի համայնքում /ՏԻՄ, շահառուներ, կազմակերպություններ/

- Հաղորդակցման հմտություններ / արտաքին կապեր
- Ներկայանալու/ բանակցային հմտություններ
- Թիմային աշխատանքի հմտություն
- Նվիրվածություն/ պատրաստակամություն
- Լրացուցիչ ժամանակ տրամադրելու հնարավորություն/ ցանկություն
- Լինի հասանելի և պատրաստ լինի շրջագայելու
- Համակարգչային գիտելիքներ /պարտադիր/ և լեզուների իմացություն/ցանկալի/
-

5.3.3 .ՀԽ համակարգողը/ նախագահը

- ընտրվում է ՀԽ անդամների կազմից, ռոտացիոն սկզբունքով, տարեկան կտրվածքով
- Համակարգում է ՀԽ-ի աշխատանքները
- Ապահովում է ցանցի բնականոն գործունեությունը
- Հետևում է տարեկան գործողությունների պլանի ընթացքին ՀԽ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում
- Կազմակերպում և վարում է ՀԽ-ի նիստերը,
- Կազմում է հաշվետվություններ ՀԽ-ի աշխատանքների վերաբերյալ
- Վարում է ցանցի անդամակցելու կամ դուրս գալու գրանցամատյանը
- Հանդես է գալիս ցանցի անունից
- Իրականացնում է ՀԽ անդամների ներքին գնահատումը 6ամիսը 1 անգամ

5.4 Խորհրդատվական խորհուրդը ԽԽ

- Ձևավորվում է ՀԽ –ին կից՝ ՀԽ և ցանցի աշխատանքներին աջակցելու նպատակով
- ԽԽ անդամ կարող են լինել անհատներ կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ
- ԽԽ անդամների թիվը որոշվում է ՀԽ կողմից,իսկ առաջադրումը վերապահվում է անդամ կազմակերպություններին
- ԽԽ –ն իրականացնում է ՀԽ արտաքին գնահատումը՝ տարեկան 1 անգամ

6. ՑԱՆՑ-ի _հանձնախմբերը.

6.1. Մշտական գործող հանձնախմբերը 4 են

- Ֆինանսական կայունության ապահովման/ֆոնդահայթայթման հանձնախումբ /նախագծերի մշակում, վճարովի ծառայություններ, նվիրատվություններ/
- PR/ Արտաքին կապերի հանձնախումբ
- Ցանցի կառավարման և զարգացման հանձնախումբ
- Սոցիալ – տնտեսական, քաղաքական և շահերի պաշտպանության հանձնախումբ - /շահառուների բիզնես հմտությունների զարգացում, խորհրդատվություններ՝ բիզնես, իրավաբանական, հոգեբանական/

6.2.Ժամանակավոր հանձնախմբերը ձևավորվում են ըստ անհրաժեշտության

6.3.հանձնախմբերը ձևավորվում են **ՑԱՆՑ-ի** անդամ Կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ սեփական նախաձեռնությամբ և նախասիրությունները հաշվի առնելով

6.4.Հանձնախմբերի աշխատանքները համակարգում են հանձնախմբերի պատասխանատուները, որի առաջադրումը և ընտրությունը կատարումն է ՀԽ-ը

6.5.**ՑԱՆՑ-ի** անդամ կազմակերպությունը կարող է ներգրավվել մեկից ավել հանձնախմբերում

6.6. Հանձնախմբերի հանդիպումները լինում են ամսական,որից 2-ը online,իսկ յուրաքանչյուր երրորդը՝ հանդիպման սկզբունքով:

6.7 Հանձնախմբերում կարող են ներգրավվել նաև կազմակերպությունների աշխատակազմի, շահառուների, անդամների ներկայացուցիչներ, փորձագետներ՝տարբեր ոլորտներից

7. Ցանցի արժեքները

- Համագործակցություն
- Նվիրվածություն
- Թափանցիկություն
- Հաշվետվողականություն
- Զարգացում
- Իրավունքների հավասարություն
- Հանդուրժողականություն
- Նորարարություն
- Ներգրավվածություն
- Թիմային աշխատանքի կարողություն
- Համախմբվածություն
- Պատրաստակամություն
- Վստահություն
- Պատասխանատվություն
- Լավատեսություն
- Նպատակասլացություն
- Արհեստավարժություն
- Հումորի զգացում
- Համբերատարություն

8. ՑԱՆՑ-ի <u>գործունեության սկզբունքները</u>

- ✓ օպերատիվ և համարժեք արձագանքում առկա կարիքներին,
- ✓ անդամների մասնակցություն որոշումների ընդունման գործընթացներում,
- ✓ քաղաքական ուղղվածության բացակայություն,
- ✓ ակտիվ կապ և նվիրվածություն,
- ✓ անդամ կազմակերպությունների առջև հաշվետվողականություն

9. ՑԱՆՑ-ի <u>կառավարման սկզբունքները.</u>

- *Անկախություն,*
- *Թափանցիկություն,*
- *Արդյունավետություն,*

- *Ժողովրդավարություն,*
- *Բազմակարծություն:*

Տեղեկատվության տարածում

- Ցանցի բոլոր անդամներին տեղեկատվություն և նորություններ կտրամադրվի էլ. փոստերի, ցանցի գործունեության վերաբերյալ հրատարակությունների միջոցներով:
- Ցանցի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն կտրամադրվի հանրության շրջանում բուկլետների, տեղեկատուների, թերթերի, տեղական հեռուստատեսությունների միջոցով: